

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ազարակ քաղաքում «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության կողմից 864 աշակերտի համար կառուցվող դպրոցի վերաբերյալ հանրային քննարկման

ՀՀ Սյունիքի Մարզ ք. Ազարակ, Գարեգին Նժդեհի 5/8

12.09.2024թ

2024 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 16:00-ին, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ազարակ քաղաքի վարչական նստավայրում (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ազարակ, Գարեգին Նժդեհի 5/8) տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Սյունիքի Ազարակ քաղաքում «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ կողմից 864 աշակերտի համար դպրոցի կառուցման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումը:

Հանրային քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Բագրատ Զաքարյանը, ներկա էին «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ (Ձեռնարկող) տնօրեն Ազատ Գասպարյանը, Մեղրիի համայնքապետարանի աշխատակիցներ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (Պատվիրատու) վերահսկող ինժիներ Նորայր Կարապետյանը, բնապահպան Արմինե Գաբրիելյանը, «Հալոյի Քանսայթ» ՍՊԸ (Նախագծող) ճարտարապետ Խաչատուր Բուդումյանը, Ազարակի միջնակարգ դպրոցի տնօրեն Անժելա Աղայան, (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ ղեկավարի առաջին տեղակալ Բ.Զաքարյանը: Նա շնորհակալություն հատնեց բոլորին ներկա գտնվելու համար, նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) և ՀՀ Կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի կունենա առաջին հանրային քննարկումը, որի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկվել է բնակչությանը և իրականացվել համապատասխան փաստաթղթերի հրապարակումը տարբեր էլ.հարթակներում: Նշեց, որ համաձայն ՇՄԱԳ փորձաքննության մասին օրենքի մինչև հանրային քննարկումը շահագրգիռ բնակիչները գրավոր կամ բանավոր կերպով (հանրային քննարկման ընթացքում) 20 աշխատանքային օրվա ընթացքում կարող էին ներկայացնել իրենց առաջարկությունները, դիտողությունները, որոնք կներառվեն արձանագրության մեջ: Խոսքը փոխանցեց ՀՏՁՀ-ի բնապահպան Ա. Գաբրիելյանին:

Ա. Գաբրիելյանը ողջունեց մասնակիցների ներկայությունը: Նշեց, որ ՀՏՁՀ-ը պատվիրատու կազմակերպությունն է, այս ծրագիրն իրականացվում է մինչև 2026 թ. կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող 300 դպրոցների

շրջանակներում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքի համաձայն իրականացվում է հանրային լսում, քանի որ կառուցապատվող տարածքը գերազանցում է 1500մ² մակերեսը: Առաջին հանրային լսման նպատակն է իրազեկել իրականացվելիք աշխատանքների, բնապահպանական միջոցառումների մասին: Բնապահպանական ազդեցությունները լինելու են լոկալ, իրականացվելու են մեղմացնող միջոցառումներ, իրականացվելու է շինհրապարակի ցանկապատում, ինչպես նաև կիրականացվեն անվտանգության միջոցառումներ: Հանրային լսումից հետո կազմվելու է արձանագրություն 5 աշխատանքային օրվա ընթացքում: Արձանագրության հիման վրա ավագանին 30 աշխատանքային օրում կկայացնի որոշում՝ դպրոցի կառուցման վերաբերյալ: Այնուհետև փաթեթը ներկայացվելու է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն (ՇՄԱԳ) ՊՈԱԿ, և կիրականցվի երկրորդ հանրային լսումը՝ նշանակված փորձագետի կողմից:

Խ. Բուդումյանը ներկայացրեց, որ Նախագծի պատվիրատուն է Տարածքային զարգացման հիմնադրամ, որը մրցութային կարգով Կապալառու կազմակերպությունն է ընտրել «Մեդրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ին: 864 աշակերտի համար դպրոցը նախագիծը մշակվել է «Բարայան ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ կողմից Երևան քաղաքի համար, իսկ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն կիրականացնի նախագծի կրկնակի օգտագործման տեղակապման բաժինները Ագարակ քաղաքի համար: Նախագիծը սահմանված կարգով ենթակվել է համալիր փորձաքննության: Դպրոցը նախատեսվում է 864 աշակերտի համար, կազմված է 4 մասնաշենքերից, ընդհանուր ունի 36 դասարան, 5 մասնագիտական կաբինետներ /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, համակարգչային և ռազմագիտություն/ և արհեստանոց ու տնավարության կաբինետ, գրադարան, գրապահոց, հանդիսությունների և մարզական դահլիճներ, տնտեսական և կենցաղային այլ շենքեր: Շինության կառուցապատման մակերեսը շուրջ 3200 մ² է, ընդհանուր մակերեսը՝ 7700 մ²: Նախատեսվում է կառուցել գործող դպրոցի հարակից տարածքում, առանց ուսումնական պրոցեսի խաթարման:

Սանհանգույցներ են տեղադրվելու յուրաքանչյուր հարկում, որոնք նախատեսված են նաև հաշմանդամների համար: Ունենալու է արևային պանելներ ֆոտովոլտային կայան շուրջ 120 կՎտ հզորությամբ՝ տանիքին տեղադրված:

Բ. Զաքարյանը հարցրեց, տեղադրվելու է նոր արևային ֆոտովոլտային կայան, թե՞ արդեն գոյություն ունեցողը:

Խ. Բուդումյանը պատասխանեց, որ տեղադրվելու են նոր կայաններ, հին կայանը կապամոնտաժվի:

Բ. Զաքարյանը հավելեց, որպեսզի դպրոցը խուսափի կրկնակի ծախսից և եթե ՏՀՀ-ի համար ֆինանսապես մեծ թեռ չէ, հին կայանները համապատասխան վայրում պահեստավորվեն:

Ն. Կարապետյանն անդրադառնալով հարցին, նշեց, որ 120 կվտ հզորությամբ կայանները արդեն իսկ նախատեսված են ողջ տարածքի համար: Առաջարկեց հին կայանները հանձնել համայնքային ենթակայության տակ:

Ա. Աղայանը նշեց, որ կայանները ունեն պիտանելիության 25 տարվա երաշխիք, տեղադրվել են 4 տարի առաջ:

Խ. Բուդումյանը ասաց, որ կայանների ապամոնտաժման կամ վերատեղադրման հարցերը կքննարկվեն ի լրումն, այնուհետև շարունակեց ներկայացնել դպրոցի նախագիծը:

Դպրոցը կունենա նկուղային հարկ: Նկուղային հարկը կծառայի նաև որպես թաքստոց: Դպրոցը կառուցվելու է միջազգային չափանիշներին համապատասխան, հարմարեցված է լինելու նաև շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար, լինելու են թեքահարթակներ և վերելակ: Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության համակարգեր և ջեռուցում: Նախատեսվում է նաև շինարարության ավարտին տարածքի բարեկարգում և կանաչապատում: Շին աշխատանքները կազմակերպվելու են անվտանգության նորմերին համաձայն: Շին. մոնտաժային աշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Շինարարության ընթացքում կատարվելու է միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից: Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարությունը նախատեսվում է շուրջ 3 տարի: Գործող դպրոցը մնալու է այնքան ժամանակ, քանի դեռ նորը չի կառուցվել, նորի կառուցումից հետո նախատեսվում է հին շենքը քանդել և բարեկարգում իրականացնել: Շինարարական աղբը կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված վայր:

Ա. Գաբրիելյանը ուշադրության հրավիրեց տարածքում իրականացվող հողային աշխատանքների ընթացքում առանձնացվող բուսահողի շերտի պահպանման մասին, համաձայն Հողաբուսաշերտի պահպանման 1404-Ն որոշման, նորմերին համապատասխան մանրամասն կներկայացվի իրականացման կարգը:

Բ. Զաքարյանը նշեց, որ Նախագծող կազմակերպությունը Կապալառու կազմակերպության հետ համագործակցության արդյունքում, ճշտգրիտ չափագրման արդյունքում պատշաճ կիրականացնեն հողային աշխատանքներ: Հարցրեց, արդյո՞ք պատկերավոր կերպով կամ քարտեզով կներկայացնեն նախագծվող աշխատանքերը:

Խ.Բուդումյանը նախագծի քարտեզը ներկայացրեց ուսումնասիրման: Առանձնացրեց, որ շինությունը ամբողջ մակերեսով ունի նկուղ, որը ծառայելու է ինչպես տնտեսական նպատակներով, այնպես էլ թաքստոց:

Բ. Ձաքարյանը հարցրեց նկուղում օդափոխությունն ապահովելու մասին:

Խ. Բուդումյանը պատասխանեց, որ նախագծով նախատեսված են օդափոխության համակարգեր:

Բ. Ձաքարյանը անդրադառնալով նկուղի հարցին հավելեց, որ անվտանգության ապահովման պայմաններից ելնելով նկուղը ծառայում է որպես թաքստոց, և հարցրեց թե՞ դրսից քանի մուտք ունի նկուղը:

Խ. Բուդումյանը պատասխանեց, որ նախատեսված են 4 մուտքեր:

Մասնակիցները համատեղ ուսումնասիրեցին քարտեզը, առանձնացրեցին նկուղի մուտքերը, դպրոցի գլխավոր մուտքը, պահեստային ելքերը:

Առաջարկվող պահեստային մուտքը հարում էր սեփականաշնորհված ավտոտնակներին:

Խ. Բուդումյանն առաջարկեց, ճշտել տվյալ ավտոտնակների համայնքային կամ սեփական լինելը, հնարավորության դեպքում լուծել այդ հարցը:

Բ. Ձաքարյանը խոստացավ ուսումնասիրել տվյալ հատվածը. համայնքային գույք լինելու դեպքում կլուծվի խնդիրը: Հարցրեց արդյո՞ք նախատեսված են ջրի պահեստարաններ:

Խ. Բուդումյանը նշեց, որ նկուղում նախատեսված են ջրի ռեզերվարներ:

Բ. Ձաքարյանը առաջարկեց, արտակարգ իրավիճակներով պայմանավորված ջրի պահեստարանները կառուցվեն բաց ջրավազանների տեսքով, որը բացի ջրի պահեստ ծառայելու կծառայի նաև սպորտային միջոցառումներին:

Ն. Կարապետյանն ասաց, որ հավելյալ կքննարկվի ջրավազան կառուցելու հարցը, կտեղեկացվի նախագծողին, շինարարներին: Դրանք տիպային նախագծեր են, որոնց համար ֆիքսված գումար է բյուջեն տրամադրում, և դա հավելյալ կքննարկվի համապատասխան մարմինների հետ:

Բ. Ձաքարյանը խնդրահարույց համարեց ջրանջատումների պարբերական բնույթը, և նշեց, որ ջրի հիդրանտներն անխափան աշխատում են 7 ատմասֆեր օդ ճնշման դեպքում:

Ա. Գաբրիելյանն առաջարկեց գրավոր դիմել ՀՏԶՀ-ին տվյալ հարցը փորձաքննող ինժիններների հետ քննակելու համար:

Բ. Ձաքարյանը հավելեց, որ ջրավազանի կառուցումը առաջնային կարիքի բավարարումից հետո կարելի է օգտագործել որպես հարակից տարածքների կաթիլային համակարգով ոռոգման, բարեկարգման, կանաչապատման համար:

Խ. Բուդոմյանը նշեց, որ խմելու և ոռոգման ջրի տեխնիկական պայմանները «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունից ճշտելու հետո պոմպակայանների, ջրի ռեզերվների աշխատանքները կիրականավեն:

Բ. Զաքարյանը հիշեցրեց, որ հաճախակի ջրանջատումները կարող են պատճառ դառնալ մոտ 1000 անձի հաշվով դպրոցում ոչ սանիտարահիգիենիկ պայմանների, այդ պատճառով պահեստավորման ջուրը պարտադիր պայման է:

Խ. Բուդոմյան անդրադառնալով հարցին, նշեց որ «Վեոլիա Ջուր» ընկերությունը ջրի քանակի, մատակարարման ռեժիմի մասին տալիս է տեխնիկական նկարագրություն, որով պայմանավորված գիշերը կկուտակվի ջուրը ցերեկային ժամերին օգտագործվելու համար:

Ա. Աղայանը հարցրեց, թե շենքի ո՞ր հատվածն է սկզբնական փուլում քանդվելու՝ ուսումնական պլանով դասընթացներն անխափան ապահովելու համար:

Քարտեզի օգնությամբ Խ. Բուդոմյանը ցույց տվեց շենքի այն հատվածը, որտեղ սկսվելու են շինարարական աշխատանքները: Մասնաշենքերի կառուցման աշխատանքների հերթականությունը կհամապատասխանեցվի ուսումնական դասապրոցեսներին, նաև այն, որ այդ ընթացքում շինարարական տեխնիկական պետք է մուտք գործի դպրոցի տարածք: Դրանով պայմանավորված առանձնացվելու շինհրապարակի հստակ սահմանները, (որը պարտադիր պետք է ցանկապատվի), երեխաների անվտանգ ելք ու մուտքի հատվածները:

Բ. Զաքարյանը ամփոփեց հանրային քննարկումը՝

1. լրացուցիչ կճշտվեն մուտքի համար հատկացվող տարածքների համայնքային կամ սեփական լինելը, համայնքային գույք համարվելու դեպքում կտրվի համապատասխան լուծումներ:

2. ջրի հիդրատների ճնշման մասով, ջրավազանի կառուցման խնդրով, որը կծառայի նաև կաթիլային համակարգ կանաչապատման գոտի ունենալու համար, նաև հրդեհային անվտանգությունը ապահովելու համար:

Անդրանիկ Մանուկյանը որպես, արտակարգ իրավիճակների քաղապաշտպանության գծով ներկայացուցիչ հստակեցրեց նկուղի օդափոխության հարցը, ջրի ռեզերվների հարցը, դասապրոցեսների ընթացքում երեխաների անվտանգության հարցը:

Ա. Գաբրիելյանը հավաստիացրեց, որ ջրավազանի կառուցումը իրենից կենթադրի մեծ ֆինանսական ռեսուրսներ, ընդարձակ տարածք, այդ պատճառով այս հարցը կքննարկվի:

Բ. Զաքարյանը, ջրի ցածր ճնշումամբ պայմանավորված, առաջարկեց, ջրի հիդրադների կառուցման համար նախատեսվող ֆինանսական ռեսուրսներն ուղղել

ջրավազանի կառուցմանը, պոպմակայանի տեղադրմանը՝ ջուրը դպրոց մղելու համար:

Բ. Զաքարյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին: Հանրային լսումը համարվեց դրական: Քանի որ գլխավոր հարցերը բարձրաձայնվեցին թե՛ դպրոցի, թե՛ համայնքի անունից, հարցուպատասխան չեղավ, հանրային քննարկումը համարվեց ավարտված:



Հանրային քննարկումների պատասխանատու՝
Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Բ. Զաքարյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ, Մեղրու ճՇՇՁ տնօրեն



Ա. Գոսգոսյան

